Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 15 -ի N 391 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօրնեկյան վարժարանի տարածքի ցանկապատում»

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Էօրնեկյան վարժարանի տարածքի մետաղական ճաղացանց ցանկապատի, դարպասների և պահակակետի կառուցման աշխատանքների կատարումը:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
4.	Ծրագրի կատարողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի. հոգևոր
6.	Ծրագրի բյուջեն	88.922.420 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայ առաքելական սուրբ եկեղեցին և դպրոցի սաները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թ. մարտի 10-ից մինչև 2021 թ. մարտի 10-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Էօրնեկյան վարժարանի տարածքի մետաղական ճաղացանց ցանկապատի, դարպասների և պահակակետի կառուցման աշխատանքները: Աշխատանքներն իրականացվելու են «Ռոբերտ Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից (ՀՎՀՀ 52193855)
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Էօրնեկյան վարժարանի տարածքի մետաղական ճաղացանց ցանկապատի, դարպասների և պահակակետի կառուցման աշխատանքները:
11.	Ծրագրի իրականացման կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ